219բ. Եւ ձեռնասնունդ աշակերտացս մեր կուսակրաւն արեղայիցս տր Ստփնոսին, տր Յոհանիսին, տր Մարգարէին եւ դեղոյ իրիցու տր Զեկիէլին (այսպէս), տր Մարտիրոսին, տր Երեմիին, եւ Հայրապետ դպրի ամէն եւ եղիցի:

Արդ՝ ստացաւդ եղեւ այսմ ածաղարդ աւետարանիս ածասէր եւ աղքատասէր եւ ողորմասիրտ եւ բարեհաւատ այրս Սատաղայ եւ բարեմիտ կենակիցն իւր Դիլշատն եւ ածապահ որդիքն իւր Սակիկն եւ որդիք նր. Ածատուր եւ Շանշայ եւ երկրորդն Վրդն եւ որդիք նր. Միրանշէն, Թուրանշէն, եւ երրդն Հովագեղ եւ որդիք նր... (բաց) եւ չորրդն Եղիշայ քհ. վայելող սբ աւետարանիս եւ որդիք սորա Բարսեղ սարկաւագ, Յունան, հինգրդն Ասպահանշայ եւ որդիք նր Բէկիջան. վեցրդն Սաւլթանշայ եւ որդի նր Ղարաճայ եւ դստերաց սորայ... (բաց) եւ հարսներոյն... (2½ տող բաց): Եւ եղբարց սորա Յոհանիսին... (երկու տող բաց) եւ միւս եղբաւրն զաւրին... (մի տող բաց) Եւ ի Քս հանդուցեալ ծնաւղացս սորա Վարդանին եւ Թանկին, Քս Ած ողորմի սոցա հոգոյն ամէն եւ եղիցի: Եւ եւ գրել զսբ աւետարանս յիշատակ իւր եւ իւրոցն ամի. եւ բարեխաւս առ Քս, յաւուրն դատաստանի. եւ յերկար կենդանութիւն որդոց իւրոց եւ ամ. ընտանեաց. որոց յիշատակ սո

220ա. ցայ ահութիւ եղիցի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 29.

Ա. Գիրք. 233. ծ.

(Ձեռ. Էջմ. No, 1478 ՆԺ.)

Մաշտոց. բոլորգիր, թուղթ. գլխաւոր յիշատակարանը թիւ չունի, այլ «ի պիտապետութեն. հայոց. տն տն Գրիգորի.»

Բայց ներքեւի լուսանցքներում.

— ...Աւագտէրի յոյժ պղերգի, որ հասանի յաւարտ գր.»

— «Տր Ած Յս Քս թող զմեղս ստացողի սբ գրոցս Գուլիկին եւ ինձ (մեղ?)աւոր գծողիս աւա... (Աւագին):

— Ած ողորմի ստացողի գրոցս Գուլիկին.

— Զտր Երեմիա զվար... իմ զսբ կրաւնաւորն յիշեցէք ի...

— Ած հանդչի մեր ծնաւղացն ու մեր աշխատաւորացն Յովանիսին, Մարթին. Գուլիկին. ամէն:

Վերջում.

Յիշատակարան գրոցս կարդա.

Փառք անբաժանելի եւ միասնական սբ. երրորդութեն. հաւր եւ որդւոյ հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Արդ՝ գրեցաւ ածաշունչ առաքելական եւ մարգարէական վարդապետիթ տառս, որ կոչի սբ հայրապետն՝ Մաշտոց՝ կոչեցեալ, Գառնեցոյ. զոր ազդեցութիւ սբ հոգւոյն ասացեալ. եւ ժողովեալ ի սբ հայրպետացն, տն Ներսիսի եւ Բարսղի Կեսարացւոյ եւ այլոց սրբոց. եւ է սայ զարդարիչ հայաստանեայց սբ եկեղեցւոյ:

Ի պիտապետութեն հայոց, տն տր Գրիգորի:*

Այլ եւ յիշեսջիք ի մաքրափայլ սբ յաղաւթս ձեր՝ զվերոյ գրեալքս ի սմա Զ...լիկն, եւ զԳաւաղանն: եւ զմարմնաւոր ծնողսն իմ զՅովանէս եւ զմարթայ. Եւ զչատ երախտաւոր մայրն իմ Սաւլթան մէլի... Եւ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, ասասջիք ի խորոց սրտէ, թէ տր Ած ողորմեսցի նոցա ամէն. ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի ամէն:

---

*Գրիգոր Մակուեցին է 1444–1466: Գրիչն է Սպիտակաւոր Ածածնի առաջնորդ Աւագտէր վարդապետը:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 30.

Ա. Գրքի եր. 233. ծ.

Յայսմաւուրք, մագաղաթ, խոշոր եւ կանոնաւոր բոլորգիր, երկսիւն սեպհականութիւն Գարեգին Եպիսկ. Յովսէփեանի, ստացուած Արշակ Զիլինգարեանից. սկզբից եւ վերջից թափած եւ փչացած, երբեմն եւ միջից թերթ պոկուած. ամբողջական վկայարանութիւններն սկսւում են Նաւասարդի ԺԲ. եւ Օգոստոսի ԻԳ. վկայաբանութի սրբոյն Երինոսի: Վերջին մասերը շատ փչացած, բայց շարունակւում է մինչեւ «Մարգաց Զ. եւ Յուլիսի Զ. վկայաբանութի սրբոյն Յակինթոսի»: Այսպիսով գրչի վերջին յիշատակարանը չունինք եւ ոչ գրչութեան թիւը. բայց կան բազմաթիւ փոքր յիշատակարաններ վկայաբանութիւնների վերջում: Ձեռագիրը յանձնել ենք Էջմ.ի պետ. մատենադարանին:

Նաւասարդի .լ. եւ սեպտեմբերի .Թ. Յիշատակ է վարուց եւ մահուան սբ հայրապետին Սահակայ» վկայաբանութիւնից առաջ.

Ով սբ տիրամայր Ածածին, դու լեր բարեխաւս առ որդին քո միածին, զի ողմեսցի. եւ զթասցի եւ թողցէ զյանցանս ստացողի գրոցս տր Յհիսի եւ Ալէքսան քհի. եւ ինձ մեղապարտի Աւագտիրի:

— Հոռի է. Եւ սեպտեմբերի ԺԶ. Վարք եւ յիշատ աղախնոյն Այ Թէոդորա... վկայաբանութիւնից առաջ.

Մանաւանդ ստացողի գրոցս Յոհէս եպսին եւ եղբաւրն Ալէքսան քհին եւ մեղաւոր գծողիս Աւագտիրիս, ամէն:

— Հոռի. ԺԶ.եւ սեպտեմբերի ,ԻԵ, վկայաբանութի սրբոց առաքելոցն Կեփասի եւ Ապաստոսի. սրանից առաջ.

Որոյ աղաւթիւքն (թեկղի) ողմի Քս Ած ստացողի գրոցս՝ տր Յոհիս եւ եղբաւրն Ստեփ քհի եւ ինձ բազմամեղի Աւագ տր գրչի, ամէն.